9. Հարթիւն բէկը[1] (1847—1921) ծնվել է Բեխում։ Բավականին հմուտ և գրագետ էր։ Ղեկավարում էր Մելիք-Փարսադանյաններին պատկանող Կապանի պղնձի հանքերը և հանքից եկած եկամուտը տարեկան մեկ անգամ բաժանում էր Մելիք-Փարսադանյանների ամեն մի ընտանիքին ըստ նրա հասանելիքը։ Հարթիւն բէկը տեղեկություններ է տվել Բաֆֆուն և Երվանդ Լալայանին Մեծ Դավիթ Բէկի մասին։

10. Նրա որդին է բժիշկ Խուրշուդ Հարությունի Մելիք-Փարսադանյանը (1884—1958), ապրել և աշխատել է Երևանում։

11. Շահրիար բէկը (1855—1894), եղել է մասնագետ բժիշկ, մահացել է Ղարսում։

12. Սուղումուն բէկը[1] (1858—1935) սովորել և ապրել է Տփղիսում, եղել է ռուսական սպա-ենթագնդապետ։

12. Կարապէտ բէկը (1856—1932) ապրել է Բաքվում, պաշտոնավարել է որպես իրավաբան։

14. Կէվէրք բէկը, որին ժողովուրդը ասում էր «Կէվ ամի», իսկ մականունով՝ «Խալիֆա», սովորել է Տաթևի վանքում։ Նա էլ է տեղեկություններ տվել Բաֆֆուն Մեծ Դավիթ Բէկի մասին։

15. Մելիք Բալիի եղբայրը՝ Ասատուրը չի մտցրած տոհմածառի մեջ, որովհետև նա եղել է դավաճան և փոխել է կրոնը, ընդունելով մահմեդական կրոն և կոչվել Ալավերդի։

Ասատուրը եղել է Մելիք-Փարսադան II հորեղբայրը։ Ասատուր-Ալավերդին անցնում է պարսիկ խաների կողմը, ստանում է նրանցից իշխանական կոչումն ու ապրում է Տաթևի մահալում։ Զայրացած ժողովուրդը սպանում է Ասատուր-Ալավերդուն և նրա ընտանիքի բոլոր անդամներին, իսկ նրա տունը հրդեհում։

16. Ասատուրի որդին՝ Մեծ Դավիթ Բէկը նրա դավաճանության ժամանակ եղել է մոտ 18—19 տարեկան։ Մեծ Դավիթ Բէկը, որը չի ներում հոր դավաճանությունը, փախչում է Հալիձոր, Ասատուրի եղբոր որդու՝ Մելիք-Փարսադան II մոտ։ Որպեսզի ժողովրդի զայրույթը չվնասի Մեծ Դավիթ Բէկին, Մելիք-Փարսադան II ։ տեղափոխում է նրան Տփղիս՝ Խոջա Սարգսի մոտ, որի մոտից Դավիթ Բէկը մտնում է վրաց թագավորի մոտ զինվորական ծառայության։

Ըստ որոշ տեղեկությունների՝ Դավիթ Բէկի սիրած Թամարը Խոջա Սարգսի դուստրն էր և ոչ թե վրաց թագավորի դուստրը։

Այսպիսով, Մելիք-Փարսադան II և Մեծ Դավիթ Բէկը երկու եղբոր տղաներ էին։

Արշավիր Աղալովի Մելիք-Փարսադանյան

3. IV. 1966 թ.
Երևան

---

[1] Նա եղել է Ստ. Լիսիցյանի մոտ ընկերը։ Բացատրությունները և տոհմածառը մեզ հանձնել է Արշավիր Մելիք-Փարսադանյանը, որի համար խմբագիրները նրան հայտնում են խորին շնորհակալություն։